

Ուխտեմ չմոռնալ մինչև ի մահ՝
Սուրբ Թադէին, Սանդուխտ կուսին
Յաւերժական այս յիշատակ:



«ՔԱՐՈՉԵԱՅ ՅԱՌԱՔԵԱԼՍՆ» ԵՒ «ՅՈՅՍ ՅԱՐՈՒԹԵԱՆ»

«Արարատի» փետրուար ամսատետրում տպուած է բարձր. Տ. Կարապետ վարդապետի մի յօդուածը «Քարոզեաց յառաքեալսն և Յոյս յարութեան» վերնագրով:

Հ. Կարապետը սխալ է համարում այժմ մեր եկեղեցում ընդունուած Հանգանակի՝ «քարոզեաց զառաքեալն» և Ս. պատարադի՝ «յոյս յարութիւն» քաւութիւն» և այլն ընթերցմունքը: Նա պնդում է՝ որ պէտք է ասել «քարոզեաց յառաքեալսն» և «յոյս յարութեան»:

Սխալ է արդեօք ինչ որ եկեղեցում կարդացւում է թէ ուղիղ՝ այդ կարող է որոշել եկեղեցին. անհատը պարտաւոր է ընդունել և խոստովանել այն՝ ինչ որ իւր եկեղեցու լրութիւնը ընդունում ու քարոզում է: Ըստ կամքս քննադատութիւն ու մեկնութիւնը շատ հեռուն կը տանի մեզ:

Թէ երբ է ընդունուել եկեղեցում «քարոզեաց զառաքեալն» ընթերցմունքը՝ ինքն Հ. Կարապետն ասում է. «մեր բոլոր տպագիր և ժէ. դարից ի վեր գրուած գրեթէ բոլոր ձեռագիր ժամագրքերի և խորհրդատետրների մէջ հանգանակի Ս. Հոգւոյ վերաբերեալ կտորն ունի «քարոզեաց զառաքեալն»:

Ուրեմն եկեղեցին աւելի քան 300 տարի է կրկնում է «քարոզեաց զառաքեալն» և իւր վարդապետութեանը համապատասխան գտնելով այդ ձևը՝ նուիրագործել է: «Քարոզեաց յառաքեալսն» կամ «զառաքեալսն» բառացի կերպով չկայ ոչ նիկիական և ոչ Կ. Պոլսոյ հանգանակի մէջ:

Սերէոսի մէջ բերած հանդանակը՝ ճշմարիտ է, ունի «քարոզեաց յառաքեալսն» րայց ունի և այլ տարբեր ընթերցուածներ: Արդ՝ եթէ անպայման ուղիղ համարենք «քարոզեաց յառաքեալսն» պէտք է ուղիղ համարենք միւս ընթերցուածներն էլ և հանդանակը կարդանք եկեղեցում ըստ Սերէոսի: Բայց Հ. Կարապետն էլ կը խոստովանի՝ որ այդ անհնարին է. պատճառ. պատճառը յետոյ կը զննեք իւր իսկ խօսքերով:

Մենք անպայման եկեղեցում ընդունուածի կողմը լինելով՝ չենք ընդունում որ և է առարկութիւն թէ՛ քերականական և թէ՛ բացատրութեան տեսակէտից, հրաժարւում ենք մեր առարկութիւններն էլ մէջ բերել:

Թէ՛ երբ է ընդունուել եկեղեցում «յոյս յարութիւն» և այլն ձևը՝ դարձեալ ինքն, Հայր Կարապետն ասում է. «Տպագիր ու վերջին դարերու ձեռագիր պատարագամատոյցների համաձայն մեր եկեղեցում այժմ կարդացւում է. «ի սուրբ ի սուրբ պատուական մարմնոյ և յարենէ տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի ճաշակեսցուք սրբութեամբ, որ իջեալ ի յերկնից բաշխի ի միջի մերում. սա է կեանք, յոյս, յարութիւն» քաւութիւն և թողութիւն մեզաց և այլն»: Իսկ մենք կասենք, որ Յովհաննէս Արժիշեցուց առաջ էլ այդպէս էր կարդացւում. որովհետեւ Հայոց ՍՃԿԶ և Փրկչի 1717 թուականին Կ. Պոլսում տպուած նրա պատարագի մեկնութեան մէջ այդպէս է գրուած (եր. 246): Ուրեմն այդ ձևն էլ 300 տարուց աւելի կրկնուելով՝ նուիրագործուել է:

Ճշմարիտ է, Խոսրով Անձեացու մեկնութեան մէջ դրւում է «յոյս յարութեան» ձևը, որ եթէ ըստ Հ. Կարապետի ուղիղ համարենք, և այժմեանը սխալ, պէտք է միւս տարբերութիւններն էլ ուղիղ համարենք, այժմեան խորհրդատետրը մի կողմ ձգենք և նորը կազմենք ըստ Անձեացու: Մեր համար այժմ պարտաւորական չեն ձեռագրերի ընթերցուածները և ինչ որ եղել է մի ժամանակ, այլ պարտաւորական է այն, ինչ որ կայ այժմ և եկեղեցու լրութիւնը ընդունում ու քարոզում է. մեզնից ոչ ոք իրաւունք ու

Համարձակութիւն պէտք է չունենայ իւր կամեցած սրբազրութիւնները ըստ կամս անել: Որովհետեւ հենց որ սկսեցինք սրբազրութեանը, դարերով սրբագործուած ցանգը կը խախտուի. եկեղեցու միութիւնը կը քայքայուի, հերձուածներ առաջ կը դան. հետեանքը շատ դառն և ցաւալի կը լինի: Օրինակները շատ շատ են:

Մեր եկեղեցու լրութիւնը ընդունել է հռնգանակի մէջ ասել «քարոզեաց զառաքեալն» և մեկնութիւնը չէ հակառակում քրիստոնէական եկեղեցու ուղղափառ դաւանութեանը, ընդ նմին և մէջտեղից բարձուում է «քարոզեաց յառաքեալսն»-ի առիթով ծագած տարակուսութիւնը, թէ ինչպէս պէտք է հասկանալ քարոզեաց առաքելոց, քարոզեաց ի ձեռն առաքելոց թե՛ քարոզեաց ի մէջ առաքելոց, և զո՞վ քարոզեաց:

«Ի Սուրբ ի Սուրբ պատուական»-ի մէջ եկեղեցու լրութիւնը ընդունել է «յոյս, յարութիւն» և այլն. այդ ձեւը ինչպէս Հ. Կարապետն էլ վկայում է 300 տարուց աւելի է, որ կրկնուելով՝ սրբագործուել է ու դարձել եկեղեցու լրութեան դաւանանքի իսկական արտայայտութիւն: Իսկ ինքն, Կարապետ Հայր սուրբն ասում է. «Պաշտամունքը եկեղեցւոյ կարգաւորութեան մէջ ամենից աւելի հաստատուն, քիչ փոփոխուող տարրն է իսկապէս: Մի անգամ որ կրօնական դադախարն ու զգացմունքը համապատասխան արտայայտութիւն են գտնում այստեղ՝ նոյնանում են շուտով այն կազապարի հետ, որի մէջ ժողովել են, և այդ կազապարը դառնում է մի նուիրական սրբութիւն. համայնքի աչքն ու ականջը վարժուում է միշտ նոյն պատեանի մէջ տեսնել իւր Հոգւոյ գանձը՝ նորա վերայ եղած փոքրիկ փոփոխութիւններն անգամ իբրեւ խորթութիւն, իբրեւ մի տեսակ սրբապղծութիւն է նկատուում այնուհետեւ»:

Ըստ ամենայնի համաձայն լինելով Հ. Կարապետի այս արտայայտութեանը՝ պարտք ենք համարում ասել, որ Հանգանակի «քարոզեաց զառաքեալն» և «Ի Սուրբ ի Սուրբ-ի յոյս, յարութիւն» և այլն մեր եկեղեցու պաշտամունքի մէջ դարաւոր ժամանակներից հետէ մեր կրօնական գաղա-

փարի ու զգացմունքի համապատասխան արտայայտութիւններ են դարձել. իսկ այդ արտայայտութեան մէջ փոքրիկ փոփոխութիւն անգամ իրրեւ խորթութիւն և սրբապղծութիւն է նկատուում: Արուած լինի այդ փոփոխութիւնը ներսէս պատրիարքից, որ առաջին և եթէ չեմ սխալուում միայն մի անգամ թոյլ է տուել իրան այդ անել, թէ մի այլ ոքից:

Եկեղեցու լրութիւնը անհամեմատ բարձր է և հեղինակաւոր քան որ և է անհատ, լինի նա ներսէս պատրիարք Վարժապետեան թէ այլ ոք նրան հետևող:

Յուսիկ Եպիսկոպոս



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

ՀԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ՎԵՋ. ՀԱՅՐԱՊԵՏԻ Ի ՏՓԽԻՍ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ.

Փետրուար 2-ին ըստ նախընթաց կարգադրութեան, նորին ս. Օծութիւն Վեհ. Հայրապետը առաւօտեան ժամը 10-ին տալով իւր հրաժեշտը միսրանից, նոր թանգարանի դռանը նստեց կաւքը և ուղևորուեց գէպի երկաթուղու կայարան (Կարխուն): Վեհ. Հայրապետին ճանապարհ գնելու ընկերացել էին Սինօզի անդամներից գեր. Տ. Յուսիկ եպս., Տ. Բազրատ վարդապետ, Տ. Աշոտ և Տ. Մխիթար վարդապետները, Մայր Տաճարի աւագ լուսարարապետ գեր. Տ. Ղևոնդ եպս., Հոգևոր ճեմարանի Տեսուչ Տ. Կարապետ և նորա օգնական Տ. Յուսիկ վրդ., նոյնպէս և Տարարանի Տե-